—Քաջ ընթերցիր ո՛վ դու տղայ, զիս գոյացոյց Էնն Աստուած,
Ա՛յն ինչ ընդիս և ընդ խաւար սահման եդեալ բաժանեաց։
Զիս անուանեաց տիւ գեղեցիկ, իմ հակառակն է խաւար,
Որ տրտմագին իւր մրթութեամբ ծածկէ պատէ զմեր աշխարհ։
Ծածկագիտին երբ զայս տեսեալ ետ ի յՈղիմպ ըզլուսին,
Գոլ փարատիչ ըզմթութիւն խաւարագգեստ զիշերին։
Իսկ ի տունջեան լուսացնցուղ և պերճալոյս ձեզ արփին,
Իւրով չքնաղ ճառագայթիւք ջահ լուսատու է երկրին։
Զայս օրինակ լուսաւորես ըզմեզ մրուայլ մեր մրտաց,
Ի գիտութիւն ճշմարտութեան, ո՛վ Վեհափառ Հայր բազմաց։
Ի խաւարէ անդրադարձցուք ի լոյս փառաց գիտութեան,
Թէ ո՛չ դառնամք, ճշմարտապէս որդի լիցուք կորստեան։

Ընդ երբ. դոռ. Ադգ. Հոգ.
Դոկ. Գրիգորեանց։

Մելիքէթ Գալանդարեանց։

է շ--ի

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ՎԵՐԱԴԱՐՁ

Նորին Վեհ. Օծութիւնն Արբաղնադոյն Կաթուղիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. ի 5-ն ամսոյս վերադարձաւ ի Տփխիսայ, և յ9-ն եհաս ի Մայր Աթոռս ի Ս. Էջմիածին։

ՎԵՐԱԴԱՐՁ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՋԱՒԱԼԵԱՆՑ

Գեր. Սարգիս Արք Եպիսկոպոս Հասան-Ջալալեանց՝ թեմական — Առաջնորդ Արցախոյ վիճակին՝ որ Խօթայ Վանուց հողոց համար եկած էր ի Տփխիս, ի 5-ն ամսոյս վերադարձաւ ի Տփխիսայ և ուղևորեցաւ դէպ ի Նուխի։

ՆԵՐՈՒՄՆ

Մի քանի անակնկալ պատճառներով՝ —որոց ի կարգին է և Տպարանի աշխատաւորաց ոմանց տենդիւ, ոմանց աչքացաւով և այլ տկարութեամբք տառապելը, —ի Յուլիս ամսոյ սկսեալ ամսագրոյս կանոնաւոր ընթացից արգելքներ յառաջացան, որով Արարատը որոշեալ ժամանակներէն բաւական յետոյ կհասանին ի ձեռս բաժանորդաց, ինչպէս և այս անգամ ներկայ ամսագիրս կընդունին բաժանորդք Հոկտեմբերի Արարատայ հետ։

Կյուսամք որ մեր սիրելի Ազգայինք ներումն կշնորհեն մի ժամանակ ակամայ յետաձգութեանց համար։

ՀՆՏԱԽՏ

Անցեալ Սեպտեմբեր ամիսէն սկսեալ ի Հին-Նախիջևան և ի շրջակայսն և ի Շարուր թեթև հնտախտի նշաններ երևեցան մերթ ընդմիջելով մի կամ երկու եօթնեկօք, և սակաւաւոր անձինք ի մահ մատնուեցան։

Գոհութեամբ կը հրատարակեմք՝ զի այժմ հնտախտն անհետացած է ի նոյն կողմանս։

ԳԻՈՐԳ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մայր Աթոռոյս միաբան և Պետս. և Նոր-Նախիջև. վիճակին Կառավարիչ Գէորգ Արք Եպիսկոպոս Մկրտչեան Երևանցի առ Աստուած փոխեցաւ ի 23-ն անցեալ Հոկտեմբեր ամսոյ ի Վիշնև, և մարմինն ամփոփեցաւ ի գերեզմանի ի գաւիթ Եկեղեցւոյ տեղւոյն։

Հանգուցեալը արդէն երկար տարիներէ ի վեր ծանր հիւանդութեամբ կը տառապէր, և տարուան մեծ մասը գրեթէ անկողնոյ մէջ կանցուցանէր։

Ազնիւ և հեզ բնաւորութեան տէր էր. գիտէր լաւ եկեղեցական երաժշտութիւն։ Ժբաղդաբար անձնական անբմբերելի հիւանդութիւնն արգելք եղան ազգի և Եկեղեցւոյ մեծամեծ ծառայութիւնք մատուցանելոյ։

Նոնաւ ի 1812 փրկ. թուականին, և ի 1832-ն ընդունուեցաւ ի Յառանգ. Վարժարանի Մայր Աթոռոյս, ուր ուսաւ ազգային գրականութիւն և եկեղեցական գիտութիւնքը ց 1836 ամն։

Ի 1835 թուականին ի Հաքարիա Արքեպիսկոպոսէ Վուկասեանց ձեռնադրուեցաւ Միսասարկաւագ, և ի 1836-ն ի Յովսէփ Արքեպիսկոպոսէն Տէր—Մարուքեանց արժանացաւ Աւագ Սարկաւագ օրհնուելոյ։

Ի 1843 թ. Երբեմն Պարսկաստանի և Հնդկաստանի Առաջնորդ Յովհաննէս Արք եպիսկոպոսն Սուրէնեանց ձեռնադրեց զնա Կուսակրօն քահանայ ի Ս. Ամենափրկիչ վանս Նոր—Ջուղայու, որոյ մօտ ի սպասաւորութեան կրգտանուէր նա։

Ի 1852 թուին փոխադրեցաւ ի վանուցն Ջուղայու ի Մայր Աթոռս ըստ անօրէնութեան լուսահոգի Ներսէս Կաթողիկոսի, և նշանակեցաւ անդամ Վանքական Տնտես. Կառավարութեան, զոր վարեց ց 1856 ամն։

Նոյնպէս 1852 թուին ընկալաւ Իշխանութիւն Նայրագոյն Վարդապետութեան, և ի 1856-ն ստացաւ Վարդապետական խաչ յաղագս անձնանուէր և հաւատարիմ ծառայութեանցն։

Կարգեցաւ Ս. Էջմիածնի Սինոդի անդամ ի 12-ն Յունվարի 1857 ամի. և անօրէնութեամբ Սինոդի նոյն պաշտօնի հետ վարեց Ս. Էջմիածնի գանձապետութիւնը մինչև ցվերջ Սեպտեմբերի 1859 ի։

1859 ի Դեկտ. ամսոյ վեցին արժանացաւ Եպիսկոպոսական աստիճանին ձեռնադրուելով Լուսահոգի Մատթէոս Կաթողիկոսէն։

1860 թ. Յուլիսի մէջ Մատթէոս Կաթողիկոս կարգեց զնա առժամանակեայ Կառավարիչ Շամախւոյ վիճակին, և անձնական ծանր հիւանդութեան համար ի 1862 թուականին արձակեցաւ նոյն պաշտօնէն և վերադարձաւ ի Ս. Էջմիածին, ուր կվարէր Սինոդի անդամութեան պաշտօնը մինչև ց 1868 թ։ Յորում Վեհ. Տ. Տ. Գէորգ Կաթողիկոս կարգեց զնա Պետս. և Նոր-Նախիջևանի վիճակին կառավարիչ; որ նոյն պաշտօնի մէջ ցներկայ թուականս մնալով կնքեց իւր կենաց ընթացքը։

Ս. ԳԵՂԱՐԴ

Ընդեալ Հոկտեմբերի ամսոյ վերջերում Յերևան և ի մերձակայսն ևս երևեցաւ հնտախտ, և 15—20 անձինք Հայերէն, ինչպէս 150—200 անձինք ևս այլազգներէն զոհ տարաւ։ Ամենայն տեղ ըստ մեծագոյն մասին Թուրքերը և Պարսիկները ձարակ կը լինէին հնտախտին՝ ինչպէս նաև Նչմիածնայ գաւառին մէջ։

Ուստի ըստ թախանձագին խնդրանաց Յերևանաբնակ մերազնէից և այլազգեաց՝ Յերևանայ Փոխ. — թեմական Գեր. Մկրտիչ Ամբ Եպիսկոպոս մեծ և երևելի հանդիսիւ տարաւ զԱ. Գեղարդն ի Մայր Աթոռոյս Յերևան 27-ն ամսոյս։

Ա. Գեղարդի հետ գնացին Ամբ. Գրիգոր Գառնակերեան և Գրիգոր Տէր-Մատթէոսեան Վարդապետք։

Նոյն հանդիսի մէջ տեսանելոյ արժանի էր բաց ի մերազնէից՝ այլազգեաց Գրիգորոնէից և Մահմետականաց բազմութիւնը և ջերմեռանդութիւնը, բազումք բոկոտն և գլխիբաց և արտասուաց հեղեղներ կը հոսէին յականողեաց։

Գանաքեռցիք ևս մեծահայց թախանձանօք խնդրեցին զԱ. Գեղարդ, և արժանաւոր հանդիսիւ տարուեցաւ անդր Յերևանայ։

Ի 21-ն ամսոյս բերելով զԱ. Գեղարդն Յերևանէն ի Վաղարշապատ, ըստ պաղատանաց և ջերմեռանդութեան ժողովրդեանն՝ մի գիշեր մնաց ի Ս. Էջմիածնի գեղջս, և ի յաջորդ աւուրն սովորական մեծ և շքեղ հանդիսիւ Միաբանութեանս ընդունուեցաւ ի Մայր Աթոռս։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՅՍ

(Շ-ր-ն-ի-ն-ի-ն։)

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՌԱԼՔԱԼԱՔԱՑ

Հասարակութիւն Գօճարէկ գեղջ . .	4
Պօղոս քահանայ Վարդապետեան . .	5
Հասարակութիւն Մեծ-Խէնջալի և Գօճարէզ գիւղօրէից	5
Վարդան քահանայ Գալստեան ի Խորենիայ գեղջ	3
Հասարակութիւն նոյն գեղջ	3
Վարդան քահանայ ի փոքր Խենջալի գեղջ	2
Հասարակութիւն նոյն գեղջ	2
Դաւիթոս քահանայ Տէր Մանուէլեանց ի Տելիվ գեղջ	4
Հասարակութիւն նոյն գեղջ	4
Բարդուղիմէոս քահանայ Տէր Յովհաննէսեան	2
Ներսէս քահանայ Ասլանեանց ի Մամլարայ գեղջ	2
Հասարակութիւն նոյն գեղջ	3
Յակոբ քահանայ Միքայէլեան ի Մեծ Գեոնտիւրէ գեղջ	6
Հասարակութիւն նոյն գեղջ	5
Յարութիւն քահանայ Վարդապետեան ի փոքր Գեոնտիրէ գեղջ	3
Հասարակութիւն նոյն գեղջ	5
Մարտիրոս քահանայ Մ. Յովսէփեան ի Տաուշ գեղջ	2
Մկրտիչ քահանայ Մկրտչեան և Սարգիս քահանայ Գերմանեանց Պիչտայ գեղջ	4
Յակոբ քահանայ Միքայէլեան ի Կարծախ գեղջ	2
Յովհաննէս քահանայ Սարկաճեանց Կարծախ գեղջ	2
Յարութիւն քահանայ Իշխանեանց և Գաբրիէլ քահանայ Մկրտչեան ի Վաշեան գեղջ	6
Հասարակութիւն Վաշեան գեղջ . .	10